ԱՌԱՋԱԲԱՆ

«ՈՒՂԵՑՈՒՅՑ ԲԱՐԵՊԱՇՏ ԿՅԱՆՔԻ» ԳՈՐԾԻ

Հայաստանյայց մեր Մայր Եկեղեցին, Ե դարից ի վեր կատարյալ անկախություն ձեռք բերելով հանդերձ, երբեք իրեն և իր ժողովրդին չի դատապարտել մեկուսացման կամ ինքնափակման, այլ երկար ու ձիգ դարերի ընթացքում շարունակել է շփման մեջ մնալ քրիստոնյա մյուս Եկեղեցիների հետ և յուրացնել այն լավն ու օգտակարը, որ կարող էր հաջող կերպով պատվաստվել մայր ծառի վրա՝ նոր համ ու հոտ հաղորդելով մեր ինքնատիպ ժառանգությանը:

Այդպես է, որ երբեք չեն դադարել թարգմանական աշխատանքները, և զանազան քրիստոնյա (և ոչ միայն քրիստոնյա) արևմտյան ու արևելյան հեղինակներ թարգմանաբար ներկայացել են հայ հավատացյալին՝ միմիայն հոգևոր օգուտ և դաս տալով նրան:

Այսօր էլ այդ թարգմանական աշխատանքը կանգ չի առել: Այսօր էլ եկեղեցական մամուլի էջերում շարունակվում են թարգմանաբար ներկայանալ հին ու նոր հեղինակներ, որոնց ստեղծագործական գոհարները համաշխարհային քրիստոնեական գրականությանն են պատկանում, ուստիև ուղղակի անհնարին է հայ քրիստոնյա մարդուն հաղորդակից չդարձնել այդ հոգևոր արժեքներին:

Այդ սկզբունքով և մղումով է թարգմանված նաև Ֆրանցիսկոս դը Սալի «Ուղեցույց բարեպաշտ կյանքի» գործը, որը հոգևոր դաստիարակության մի սքանչելի գոհար է, որով բարեպաշտ ապրելու արվեստն է սովորել արդեն քանի սերունդ:

Ֆրանցիսկոս դը Սալի անունը վաղուց անտի հայտնի է իր երկրի սահմաններից դուրս: Իր երկերը թարգմանվել են աշխարհի բազմաթիվ լեզուներով: Ռուսերեն թարգմանությամբ այն հայտնի է նաև հայ ընթերցողներից ոմանց, սակայն հայերեն թարգմանությամբ Կաթոլիկ Եկեղեցու այս մեծ սուրբը դառնում է հայախոս և հայաբարբառ:

Ֆրանցիսկոս դը Սալը (1567-1622) եղել է Ժնևի եպիսկոպոսը (1602-ից) և իր գրչի զորությամբ դարձել Կաթոլիկ Եկեղեցու առաջնորդող պաշտպաններից մեկը՝ ընդդեմ կալվինականության հարձակման: Փայլուն ապագա խոստացող աշխարհիկ ծառայությունը թողնելով, Ֆրանցիսկոսը 26 տարեկան հասակում ձեռնադրվեց քահանա և իր ամբողջ կյանքը նվիրեց Եկեղեցու ամբողջականության և միության ջատագովությանը և, անգամ արհամարհելով իր կյանքի դեմ եղած

սպառնալիքները, եռանդուն քարոզչություն ծավալեց բողոքական-կալվինականների շրջանում՝ զգալի հաջողությամբ։

Իր ամենահայտնի գործերն են՝ «Ուղեցույց բարեպաշտ կյանքի» և «Աստուծո սիրո մասին», որոնք անհատական կյանքի քրիստոնեավայել կազմակերպման հոյակապ դասագրքեր են։

Ֆրանցիսկոս դը Սալի գործերի հիմնական արժեքն այն է, որ այն հեռու է դավանաբանական վիճահարույց կետերի նույնիսկ աննշան արծարծումից և ըստ այդմ հավասարապես ուսանելի է ցանկացած դավանանքի տեր քրիստոնյայի համար։ Այնուամենայնիվ, հեղինակի տողերում զգացվում է խորին համոզումը վավերական և առաքելական Եկեղեցու միության և ամբողջականության վերաբերյալ, որ նույնքան օրինակելի է մեզ համար։

Կարծում ենք, որ այս գործը օգտաշատ կլինի բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են «ընտրել Տիրոջ ճշմարտության ճանապարհները... ու ընթանալ Տիրոջ պատվիրանների ճանապարհով» (Սաղմ. ՃԺԸ 30, 32)։

Մ. Ծ. Վ. Ա.